Հիմնական փուլում կատարվում է մասնաշենքերի քանդման և ապամոնտաժման աշխատանքները ըստ տեխնոլոգիական հաջորդականության` պահպանելով շենքի բեռնաթափման համաչափությունը:
Տվյալ հավաքովի ե/բ կոնստրուկցիան ապամոնտաժելուց առաջ անհրաժեշտ է նախապատրաստել այն ապամոնտաժման` անջատել բոլոր տիպի կապերից, քանդելով կոնստրուկցիաին կից ե/բ մոնոլիտ տեղամասերը: Կոնստրուկցիայից բացակայող բռնիչների համար պետք է մշակել նոր հուսալի բռնիչներ կապելով այն կոնստրուկցիայի աշխատող ամրանային ձողերի հետ` ստուգելով կրկնակի բեռի ծանրության տակ, ինչպես նաև վավերացնելով տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից գրավոր փաստաթղթով:
Շենքի ապամոնտաժման համար ընտրված է LIEBHERR մակնիշի ավտոկռունկ Q=25տ Lст=27մ սլաքի թռիչքով:
Ապամոնտաժված կոնստրուկցիաները տեղափոխվում է հատուկ սալատար մեքենաների միջոցով 13կմ հեռավորության վրա դեպի պոլիգոնային տարածքներ:
Բոլոր տիպի քանդման և ապամոնտաժման աշխատանքները պետք է կատարել պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները ըստ ՇՆԵՎԿ III-IV-2008-ի դրույթների, մասնավորապես մշակելով լրացուցիչ միջոցառումներ արտացոլելեվ այն ՔԱԿՆ-ում / քանդման աշխատանքների կատարման նախագծում/:
Քանդման և ապամոնտաժման աշխատանքների համար անհրաժեշտ է խստագույնս հետևել անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանմանը, ապահովելով պատասխանատու անձի /անվտագության ճարտարագետի/ մշտական ներկայությունը տվյալ կոնստրուկցիայի ապամոնտաժվող տեղամասում:
Քանդման և ապամոնտաժման աշխատանքները կատարվում են ըստ նշված ժամանակացույցի և օրացույցային գրաֆիկի:
Քանդման աշխատանքների ժամանակ հաշվի առնված քանդումից առաջացած պիտանի նյութերի քանակը և առաջարկվում է տեղափոխել պահեստ, որի համար կազմվում է համապատասխան ընդունման և հանձման ակտ կապալառուի և պատվիրատուի միջև:
Ամբողջ քանդման աշխատանքների կատարման ժամանակ պետք է կատարել միջոցառումներ շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ թույլ չտալ փոշու և թունավոր արտանետումներ նորմայից ավել քանակություններ դեպի մթնոլորտ, չօգտագործել խմելու ջուրը տեխնիկական և այլ տեխնոլոգիական նպատակներով:
Շին աղբով բարձած մեքենաների թափքը պետք է թրջել և ծածկել պոլիէթիլենային թաղանթներով, թույլ չտալով փոշու ամպի գոյացություններ:

Կազմեց` Ա.Պետրոսյան